ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2021 թվականի N 349-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 07-Ի N 182-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված կարգի 19-րդ կետի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի հունիսի 07-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին» N 182-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման N 1 հավելվածի՝

ա. 12-րդ կետում՝ «Չարենցավանի N 2 հիմնական դպրոց» բաժնում *«Մարի Բայյան»* բառերը փոխարինել *«Դավիթ Իվանյան»* բառերով,

բ. 13-րդ կետում՝ «Չարենցավանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան N 3 հիմնական դպրոց» բաժնում *«Գագիկ Մկրտչյան»* բառերը փոխարինել *«Գարիկ Չիլինգարյան»* բառերով,

գ. 14-րդ կետում՝ «Չարենցավանի Ս. Ավանյանի անվան N 4 հիմնական դպրոց» բաժնում *«Գարիկ Չիլինգարյան»* բառերը փոխարինել *«Գագիկ Մկրտչյան»* բառերով,

2) որոշման N 2 հավելվածի՝

ա. 4-րդ կետում՝ «Մարմարիկի միջնակարգ դպրոց» և «Աղավնաձորի Ջ. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» բաժիններում *«Էմմա Գևորգյան»* բառերը փոխարինել *«Գագիկ Բաբաջանյան»* բառերով,

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ սույն որոշման մասին իրազեկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Չարենցավանի N 2 հիմնական դպրոց», «Չարենցավանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան N 3 հիմնական դպրոց», «Չարենցավանի Ս. Ավանյանի անվան N 4 հիմնական դպրոց», «Մարմարիկի միջնակարգ

դպրոց» և «Աղավնաձորի Զ. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021 թվականի սեպտեմբերի 28
ք. Հրազդան